



http://cfoa.am

Համայնք-ՀամաՏեղ



http://celog.am

ՀամաՏեղ ծրագրի պաշտոնաթերթը Official Newspaper of CELoG program

Հրատարակվում է 2003 թվականից

Հոկտեմբեր 2018, թիվ 10 (122)

Խմբագրական

ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ամփոփել է հոկտեմբերի 21-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքները:

ՏԻՄ ընտրություններ են կայացել հանրապետության 9 մարզի 49 համայնքում, որից 24-ում ընտրությունները եղել են հերթական, 25-ում՝ արտահերթ:

ՏԻՄ ընտրություններ են կայացել հանրապետության 4 քաղաքներում՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքում, Արմավիրի մարզի Էջմիածին և Արմավիր քաղաքներում, Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում:

Էջմիածնում քաղաքապետ է ընտրվել «Քաղաքացիական պայմանագիր» (ԶՊ) կուսակցության կողմից առաջադրված Դիանա Գասպարյանը: Հայաստանի առաջին ընտրված կին քաղաքապետը ստացել է 8076 ձայն: Երկրորդ տեղում Սուրեն Մուրադյանն է՝ 3699 ձայնով: Էջմիածնի քաղաքապետի ընտրություններում գրանցվել է ցածր մասնակցություն: ընտրություններին մասնակցել է 45278 ընտրողներից 15826-ը (կամ ընտրողների 34,95%-ը):

Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում քաղաքապետ է ընտրվել ինքնաառաջադրված թեկնածու Սեւակ Միքայելյանը, որն Ազգային ժողովի «Ելք» խմբակցության պատգամավոր Սասուն Միքայելյանի որդին է: Նա ստացել է 10 681 քվե, իսկ նրա միակ մրցակից Լեւոն Ստեփանյանը՝ 4 819 քվե: Սեւակ Միքայելյանը ԶՊ-ի անդամ է, սակայն կուսակցությունը հայտարարել էր, որ Հրազդանի քաղաքապետի թեկնածու չի առաջադրել և չի սատարելու որեւէ թեկնածուի: Հրազդան քաղաքում 44154 ընտրողներից քվեարկությանը մասնակցել է 16259-ը (կամ ընտրողների 36,82%-ը):

Կապանում անկուսակցական Գեորգ Փարսյանը հաղթել է ԶՊ-ի կողմից առաջադրված թեկնածու Նարեկ Բաբայանին: Գ. Փարսյանն ստացել է 10 507 ձայն, Նարեկ Բաբայանը՝ 8 499: Կապան խոշորացված համայնքում գրանցված 34 969 ընտրողից քվեարկությանը մասնակցել է 19 503-ը (55,77%-ը):

Արմավիրի մարզի Արմավիր համայնքում քաղաքապետ է ընտրվել ԶՊ կուսակցության առաջադրած թեկնածու Դավիթ Խուրթաթյանը: Վերջինիս օգտին քվեարկել է 6 693 ընտրող: Երկրորդ տեղում Օհան Հարությունյանն է՝ 1626 ձայնով, իսկ երրորդում՝ Սեւակ Մինասյանը՝ 1288 ձայնով: Արմավիրում հոկտեմբերի 21-ին կայացած քաղաքապետի արտահերթ ընտրություններին 26 036 ընտրողից մասնակցել է 8 969-ը:

Հայաստանի 9 մարզերի 49 համայնքներում հոկտեմբերի 21-ին անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցությունը, ժամը 20:00-ին ընտրատեղամասերի փակման պահին կազմել է 43,28%, ընտրողների ցուցակներում ընդգրկված է եղել 217 708 մարդ: Դեկավար ընտրող ամենախոշոր համայնքներից Էջմիածնում քվեարկել է 45 278 ընտրողների 34,95%-ը, Արմավիրում՝ 28 699 ընտրողների 34,62%-ը, Հրազդանում՝ 44 156 ընտրողների 36,82%-ը, և Կապանում՝ 34 969 ընտրողների 55,77%-ը:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ 10-ՐԴ ԳԻՐՔԸ՝ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Երբ քաղում ես կատարված աշխատանքի պտուղները



Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման սկզբից՝ 1996թ. սկսած, Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ) իրականացնում է ՀՀ ՏԻ համակարգի մոնիտորինգ և պատրաստում զեկույցներ դրա վերաբերյալ: ՀՖՄ-ն այդ ուղղությամբ հրատարակել է ինը գիրք, որոնցում ներառվել են մեկ կամ մի քանի տարիների զեկույցներ և տրվել են ՏԻ համակարգի տարեկան վերլուծությունները և գնահատականները, ինչպես նաև դրանց հիման վրա արվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

էջ 3-5 →

«ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նոր քայլ և նոր աստիճան տեղական ժողովրդավարության գործում

ԱՄՆ Միջազգային գարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագիրն սկսել է իրականացնել նոր բաղադրիչ՝ «Տեղական ժողովրդավարության դպրոց», որի մասին «Համայնք-ՀամաՏեղ» գրուցեց ՀամաՏեղ ծրագրի ղեկավար Վահան Մովսիսյանի և նույն ծրագրի համակարգող Միքայել Հովհաննիսյանի հետ:

- Պարոն Մովսիսյան, ըստ էության, ՀամաՏեղ ծրագիրը մոտենում էր ավարտին, սակայն այն որոշակիորեն երկարացվել է:

- «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագիրը թեւակոխեց ծրագրային 5-րդ տարին, որը պետք է համարվեր ավարտական, սակայն 5-րդ տարվանից սկսած ծրագիրը որոշակիորեն երկարացվել է՝ հավելյալ ֆինանսավորմամբ, և ներդրվել է նոր բաղադրիչ՝ 2 տարի իրականացման ժամկետով: Այս նոր մասով նախատեսված գործողությունները և արդյունքներն ուղղակիորեն համալրում են ՀամաՏեղ ծրագրի ընդհանուր գաղափարախոսությունը և ավելի ընդլայնում այն, քանի որ, եթե ՀամաՏեղ ծրագիրն իր աշխատանքները հիմնականում կորոզիցնացնում էր միայն խոշորացվող համայնքներում, ապա այս բաղադրիչն ավելի ընդարձակ է և տարածվում է ամբողջ Հայաստանի վրա, բացառությամբ՝ Երեւանի:

Ծրագիրը կոչվում է «Տեղական ժողովրդավարության դպրոց»: Սա դպրոց է, որտեղ մարդիկ սովորելու են լինել տեղական ժողովրդավարության ջատագով և առաջնորդ, մտքներում ունենալ մասնակցային ժողովրդավարության հայեցակարգը և դրանով առաջնորդվել իրենց գործողություններն իրականացնելիս:

էջ 2 →

← էջ 1

- Պարոն Հովհաննիսյան, ի՞նչ է ակնկալվում ունենալ այս ծրագրի արդյունքում:

- Ծրագրի արդյունքում ունենալու ենք համայնքներում ակտիվ գործունեություն ծավալող մի մեծ խումբ երիտասարդներ, ովքեր ունենալու են գիտելիքի եւ կարողությունների բավական հետաքրքիր համադրություն թե՛ տեղական ինքնակառավարման ոլորտում, թե՛ հարակից գործառնական ոլորտներում: Այսինքն, ստանալու ենք այն որակները, որոնք օգնելու են այդ երիտասարդներին՝ համայնքային առաջնությունների իրենց դերը էֆեկտիվ կերպով իրականացնելու գործում: Խոսքը մի քանի գիտելիքի խմբի մասին է:

- Ծրագրի իրականացման առնչվող կարողություններ (կառավարում, հաղորդակցություն, թիմ կառուցելու եւ թիմային աշխատանք իրականացնելու կարողություններ, ներքին հաղորդակցություն, ռազմավարություն եւ այլն):

- Երկրորդ խումբը վերաբերում է մարդկային որակներին, այսինքն այն հմտություններին, որոնք հնարավորություն են տալիս մարդուն կոնսոլիդացնել, մոբիլիզացնել համայնքի բնակիչներին, իր տեսակետը ճիշտ ձեւակերպել եւ տեղ հասցնել, կարողանալ լինել առաջնորդ եւ իր հետեւից մարդկանց տանել ...

Ծրագրի իրականացման արդյունքում մենք ունենալու ենք ՏԻ ոլորտից տեղակ, եւ նշված որակներով ու հնարավորություններով օժտված երիտասարդներ, որոնք այս ամենին տիրապետելով հանդերձ, չեն կարող անմասն մնալ համայնքում իրենց առաջնությունն իրացնելու գործից: Սա նշանակում է, որ մենք կարող ենք ակնկալել, որ «Տեղական ժողովրդավարության դպրոց» անցած երիտասարդների մեծ մասը կամ ՏԻ-ին մասնակցելու է կամ որպես համայնքային ակտիվիստ, կամ որպես անմիջական գործող անձ, այսինքն՝ համայնքի ավագանու անդամ, համայնքի ղեկավար, ՏԻՄ աշխատակից...

Այս ծրագրի իրականացումը շատ կարեւոր է հատկապես Հայաստանի ներկա իրավիճակը հաշվի առնելով, երբ բոլոր ոլորտներում, մակարդակներում մենք ունենք նոր ընկալում, նոր հեռանկարներ ու ամբիցիաներ ունեցող, կարող, ուսյալ,

«ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նոր քայլ եւ նոր աստիճան տեղական ժողովրդավարության գործում



կրթված երիտասարդ կադրերի կարիք: «Տեղական ժողովրդավարության դպրոցը» մասամբ կաջակցի, կնպաստի ՏԻ ոլորտին՝ կադրային այս բացը լրացնելու գործում:

- Ներկայացրեք, խնդրեմ, պարոն Հովհաննիսյան, թե ի՞նչ մեթոդներ ու գործիքակազմ է կիրառվելու ծրագրին իրականացնելու ընթացքում:

- Ծրագրի իրականացմանը մասնակցելու են ՀամաՏեղ համընկերության երեք կազմակերպություններ՝ Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ), «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամը (ԵՀՀ) եւ Տեղեկատվական համակարգերի զարգացման եւ վերապատրաստման կենտրոնը (ՏՀՉԿԿ)՝ իրենց գործիքակազմի ամբողջ զինանոցով:

Շատ կարեւոր է հասկանալ, որ երբ ասում ենք դպրոց, խոսքը տեղի մասին չէ, այլ՝ բովանդակության, դա մեթոդաբանություն է, կյուբեր են, մարդիկ են, ովքեր տիրապետում են այդ մեթոդաբանությանը ու կարող են ցանկացած վայրում այդ կրթական պրոցեսը նախաձեռնել եւ իրականացնել:

Մեր նպատակն է այս ծրագրի արդյուն-

քում ունենալ կրթական փաթեթ, որը լինելու է բավական ունիվերսալ եւ օգտագործվելու է անկախ նրանից՝ ծրագիրը շարունակվում է, թե ոչ, այսինքն՝ դու ունես պատրաստի գործիք, որը կարող ես օգտագործել ըստ պահանջի, եւ կլինեն նաեւ փորձագետներ, ովքեր կարող են դա իրականացնել:

Այս դպրոցն ու ուսուցումը եւ դրա շարունակականությունը չպետք է լինեն ավանդական ձեւով, եւ մշակվելու են նոր գործիքներ, որոնք ինտեռակտիվ եւ հեռակա ուսուցման հնարավորություն կտան:

Որպես օրինակ նշեմ, որ celog.am կայքում ունենալու ենք հեռահար ուսուցման բաժին, այսինքն՝ օնլայն տեղական ժողովրդավարության դպրոց, որն իր մեջ ներառելու է թե՛ հրկից ծայրահարկ ռազմավարությունները, թե՛ մուլտիմեդիա եւ տարբեր էլեկտրոնային գործիքներ:

Մյուս բաժնում ընդգրկված են պրակտիկ մասնավոր գործիքները, որոնք խթանում են տեղական ժողովրդավարությանը եւ որոնք լինելու են տեղում ծագած գաղափարների հիման վրա ձեւակերպված էլեկտրոնային լուծումներ:

Ծրագրի իրականացման ընթացքում օգտագործվելու են նաեւ առկա էլեկտրոնային գործիքները, մասնավորապես ՏՀՉԿԿ կողմից ստեղծված Համայնքային Կառավարման Տեղեկատվական Համակարգի (ՀԿՏՀ) որոշ բաղադրիչների բարելավում, թարմացում՝ ավելի պրակտիկ եւ ինտերակտիվ դարձնելու տեսանկյունից եւ հավելյալ այլ գործիքների ձեւավորում ու ներդրում:

Ծրագրի շատ կարեւոր մաս է հանդիսանում ջատագովության բաղադրիչը. ծրագրի ավարտական հատվածը, որը կարելի է բնութագրել որպես տեսական գիտելիքի ամենապարզ կիրառման փուլ, իրենից ներկայացնում է տարբեր մասսայական միջոցառումներ՝ մասնա-

վոր կամ ընհանուր խնդիրների ձեւակերպման եւ դրանց լուծումը որոշում կայացնողներին պարտադրելու եղանակով: Այսինքն՝ ստեղծվելու են թիմեր, ձեւակերպվելու են խնդիրներ, մշակվելու է ջատագովության ռազմավարություն, որի իրագործման արդյունքում մենք ակնկալում ենք, որ կլինեն օրենսդրական բարեփոխումներ, քաղաքականությունների բարելավում, գուցե նաեւ տեղական գործիքների բարելավում: Սա շատ կարեւոր է ոչ միայն արդյունքի տեսանկյունից, այլ նաեւ՝ որպես կրթական բաղադրիչ, որով հետեւ այդ երիտասարդներն իրենց ստացած գիտելիքները նախ փորձելու են իրականացնել տեղական մակարդակում՝ փոքր դրամաշնորհային, հետազոտական ծրագրերի միջոցով, ու դրանից հետո հավաքած այդ ամբողջ գիտելիքը, փորձը տեղափոխելու են կենտրոնական մակարդակ, լուծումներ առաջարկելու եւ այդ լուծումները համատեղ իրականացնելու ուղղությամբ:

Մենք փորձելու ենք քայլեր ձեռնարկել, որ նախեւառաջ ՏԻՄ-երը, նաեւ որոշ հասարակական եւ մեդիա կազմակերպություններ մեր շրջանավարտներին որպես փորձակներ ընդունեն իրենց մոտ՝ 1-2 ամիս ժամկետով, որպեսզի նրանք ներսից տեսնեն՝ այդ կազմակերպություններն ինչպես են աշխատում, առավելությունները, թույլ կողմերը եւ նաեւ ադապտացվեն այդ միջավայրին, ինչը կլինի բավական հետաքրքիր պրակտիկ փորձ իրենց հետագա գործունեության ընթացքում:

Իր ձեւի եւ բովանդակության մեջ յուրօրինակ, Հայաստանում իր նախադեպը չունեցող այս ծրագիրն արդեն իսկ մեկնարկել է, եւ հույս ունենք, որ ծրագրի իրագործմամբ մի նոր աստիճան կղնենք տեղական ժողովրդավարության գործում:

ՀԱՍՄԻԿ ԲԵՐՈՒՅԱՆ

Աղստե գետը յուրահատուկ գեղեցկություն է հաղորդում իջեւան քաղաքին՝ հանդիսանալով տարածաշրջանի էկոհամակարգի կարեւոր բաղադրիչներից, միաժամանակ կապելով Տավուշի եւ Լոռու մարզերը միմյանց: Այն նաեւ իջեւանցիների սիրելի զբոսավայրն է հատկապես ամռան ամիսներին: Աղստե գետը իր գեղեցկությամբ կարող է նպաստել իջեւանը տուրիզմի կենտրոն դարձնելու գաղափարին:

Սակայն ներկայումս Աղստեի աղտոտվածությունը դարձել է քաղաքի առաջնահերթ խնդիրներից մեկը: Կենցաղային աղբը, որը գետ են թափում բնակիչներն ու մերձափնյա խանութների աշխատակիցները, իրական բնապահպանական աղետ է դարձել քաղաքի համար: Չնայած գետի կարեւորությանը, իջեւանցիները հոգատարությամբ չեն վերաբերվում գետի մաքրությանը: Այս խնդրի շուրջ երկար ժամանակ է, ինչ լսվում էր բնակիչների, բնապահպանների մտահոգ ձայնը, ովքեր իրենց բողոքն ուղղում են եւ՝ իջեւանի համայնքապետարանի կոմունալ ծառայությանը, եւ՝ խանութների սեփականատերերին, եւ՝ աղտոտող բնակիչներին:

Աղստե գետի աղտոտման հարցը կազմակերպչական, կառավարչական, համակցության մշակույթի եւ հաղորդակցու-

ԱՂՍՏԵՎ ԳԵՏԻ ԱՂՏՈՏՄԱՆ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ



թյան խնդիրների համալիր է, ինչը նշանակում է, որ պարբերաբար կազմակերպվող շաբաթօրյակները որեւէ դրական արդյունքի հանգեցնել չեն կարող: Այդ իսկ պատճառով իջեւանի ԻնֆոՏուՆը նախաձեռնեց հանրային քննարկում, որը մի սեղանի շուրջ հավաքեց շահագրգիռ բոլոր խմբերին՝ ի դեմս Տավուշի մարզպետարանի, իջեւանի համայնքապետարանի ներկայացուցիչների, բնակիչների եւ ավամերձ խանութների սեփա-

կանատերերի: Պետք է նշել, որ բազմաթիվ խանութների սեփականատերերից ներկա էին միայն «Իջեւան սիթի» եւ «Բագե» սուպերմարկետների եւ Երեւանյան փողոցում գտնվող ձկան խանութի ներկայացուցիչները:

Բնակիչներն իրենց դժգոհությունն արտահայտեցին համայնքապետարանին՝ մասնավորապես բողոքելով ոչ հաճախակի կատարվող աղբահանության փաստից: Համայնքապետարանի կոմունալ ծառայու-

թյան կողմից իրականացվող աղբահանության հաճախականությունը բավարար չէ մաքրության պահպանման համար, ինչն էլ գետի աղտոտման հիմնական պատճառներից մեկն է:

Քննարկման արդյունքում դուրս բերվեցին մի քանի լուծման ուղիներ եւ կատարվեցին առաջարկներ: Դրանցից որպես խնդիր լուծման սկզբնական ձեւակերպվեց գետի հիմնովին մաքրումը այնտեղ տարիներով կուտակված աղբից: Սա թույլ կտա վերականգնել գետի բնական տեսքը: Մաքրող գետը շատերին հետ կպահի այն աղտոտելու ցանկությունից, քանի որ ավելի հեշտ է աղբը նետել արդեն իսկ կեղտոտված վայրում, քան մաքրող տեղում: Այս խնդիր լուծման համար անհրաժեշտ է համապատասխան տեխնիկա, որի բացակայության դեպքում, կարելի է դիմել հարեւան համայնքապետարաններին՝ վարձակալելով այն:

Խնդրի լուծմանն ուղղված հաջորդ կարևոր գործողությունը աղբահանության գրաֆիկի

վերանայումն է՝ համապատասխանեցնելով այն աղբի հավաքման օրերին: Այսինքն, կոմունալ բաժնից պետք է պարբերական կապի մեջ լինի խանութների սեփականատերերի հետ՝ պարզելու աղբի կուտակման եւ պահեստավորման ժամկետները՝ ըստ այդմ կազմակերպելով աղբահանությունը:

Քանի որ ներկայումս յուրաքանչյուր մարդ «մեդիա» է, անհրաժեշտ է մշակել հանրային վերահսկողության եւ իրազեկման մեխանիզմներ: Դա ենթադրում է, որ յուրաքանչյուր ոք, աղտոտողների նկատելով, պետք է բարձրաձայնի խնդիրը՝ ընդհուպ մինչեւ տեսաձայնագրելով այն: Այս բոլոր գործողություններին զուգահեռ անհրաժեշտ է կատարել իրազեկման եւ կրթական աշխատանքներ, որոնք թույլ կտան մարդկանց մեջ ձեւավորել նոր մշակույթ եւ զարգացնել հանրային սեփականության գգացումը համայնքի բնակիչների շրջանում:

ՏԱՐԵՎ ՓՍՓՍՉԱՆ

← էջ 1

ՀՈՒՄԱՆԻՏԱՐԱՅԻՆ 10-ՐԴ ԳԻՐՔԸ՝ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Երբ քաղում ես կատարված աշխատանքի պտուղները

Հրատարակված «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» 9 գրքերի բովանդակությունը կազմվել է՝ ՏԻ բնագավառի առանձին 7 ուղղությունների վերաբերյալ ՀՖՄ և անկախ փորձագետների կողմից կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա, տարեկան գեկույցի առանձին բաժինների տեսքով: Համաձայն մեթոդաբանության, դրանք բուլրն էլ կազմվել են նույն ձևաչափով և պարունակել են նաև ՀՀ ՏԻ բարեփոխումների գնահատականներն՝ ըստ համակարգի առանձին բնագավառների:

Հրատարակության նա-

խանաստների միավորման նախագահ Վահան Մովսիսյանն ամփոփ ներկայացրեց այն ուղին, որն անցնում է յուրաքանչյուր հրատարակություն՝ մինչև այն հանրության դատին հանձնելը:

Նա տեղեկացրեց, որ մինչ այժմ հրատարակված 9-ը գրքերից յուրաքանչյուրի շապիկին պատկերվել է տվյալ ժամանակահատվածում Հայաստանի տեղական ինքնակառավարման ոլորտի հա-

խմբագիր Վահրամ Շահբազյանին, որոնց հետևողական ու տքնաշան աշխատանքի արդյունքում հրատարակվել է նմանօրինակ ակադեմիական որակի փաստաթուղթ: Վ. Մովսիսյանը երախտագիտությամբ հիշատակեց նաև երջանկահիշատակ Դավիթ Թումանյանին, որը նախորդ 8 գրքերի նախածանոթն ու խմբագիրն է եղել:

Բանախոսը հայտնեց, որ գրքի հոբելյանական համարը նվիրված է Հայաստանի Հանրապետության հռչակման 100-ամյակին, ինչպես նաև՝ ՀՖՄ հիմնադրման 20-րդ տարեդարձին:

«Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» հրատարակության ունեցած մեծ դերի ու կարելությունների մասին խոսեց նաև ՏԿՁՆ տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժնի պետ Կարեն Բակոյանը: «Մեզ միշտ էլ հաճելի է ներկա գտնվել ՀՖՄ միջոցառումներին, որոնց մասնակցում ենք ոչ թե հանուն արարողակարգի, այլ գալիս ենք տեսնելու այն մարդկանց, ովքեր ոլորտում ինչ-որ ներդրում ունեն եւ սրտացավ են ոլորտի համար:

Երկար տարիներ համատեղ աշխատել ենք լուսահոգի Դավիթ Թումանյանի հետ եւ այսօր էլ շարունակում



խորդ համարներից մեկի շնորհանդեսի ժամանակ, անդրադառնալով գրքի ստեղծման նախապատմությանը եւ հետադարձ հայացք գցելով անցյալին, ՀՖՄ ղեկավար Վահան Մովսիսյանը հիշեց, թե ինչպես 2002թ., երբ ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» նոր օրենքը, որը որակական փոփոխություններ մտցրեց համակարգում, միտք հղացավ՝ ունենալ տպագիր նյութ, որը կկարողանա գնահատել նախորդ 5 տարիները. «Թեզիսների ու առանձին հոդվածների տեսքով ծնվեց առաջին գիրքը, հետո հասկացանք, որ մենք իրավունք չունենք միայն պատմությանն անդրադառնալ, մենք պետք է ամեն տարի փորձենք վերլուծել ու գնահատել եւ այսպես շարունակ»:

Այսպես շարունակ, եւ Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգը վերլուծող ու գնահատող եւ իրար հաջորդող հրատարակությունների թիվը հաստեց մեկ տասնյակի եզրագիծը:

«Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» գրքի հոբելյանական՝ 10-րդ հրատարակության շնորհանդեսը տեղի ունեցավ սույն թ. 10-րդ ամսի 10-րդ օրը. այն մեկտեղ էր հավաքել ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության (ՏԿՁՆ), միջազգային եւ տեղական կազմակերպությունների ներկայացուցիչների, գործող եւ նախկին համայնքապետների, փորձագետների, ՏԻ ոլորտով հետաքրքրվող անձանց, ուսանողների:

Ողջունելով եւ շնորհակալություն հայտնելով ներկայությունը՝ Համայնքների ֆի-

մար ամենակարեւոր եւ նշանակալի իրադարձությունը: Հոբելյանական հրատարակությունը խորհրդանշում է 10-ը թիվը, իսկ գրքի շապիկին պատկերված Հայաստանի քարտեզի վրա երեւացող խոշորացված բազմաբնակավայր համայնքները՝ 2017թ. ՀՀ ՏԻ համակարգի կարելություններն իրադարձու-



թյունը՝ վարչատարածքային բարեփոխումները:

«Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» աշխատությունը ՀՀ տեղական ինքնակառավարման ոլորտի միակ պարբերաբար հրատարակվող գիրքն է: Սա այն գիրքն է, որը ներառում է տեղական ինքնակառավարումը Հայաստանում՝ առաջին օրվանից մինչև այսօր: Եթե որեւէ մեկը ցանկություն ունի պատմություն գրել ՀՀ ՏԻ մասին, ապա լավագույնն ու հավաստի ինֆորմացիայի աղբյուր կարող է լինել հենց այս գիրքը»,- նշեց ՀՖՄ ղեկավարը: Վերջինս խորին շնորհակալություն հայտնեց փորձագետներին եւ փորձագիտական թիմի ղեկավար, 10-րդ հրատարակության

ենք մեր համագործակցությունը ՀՖՄ փորձագիտական թիմի հետ: Կարելի է ասել, որ նաև մեր համատեղ աշխատանքի արդյունքում են ծնվում այս գրքի որոշ բաժիններ, հոդվածներ: Որպես պետական կառույցի ներկայացուցիչ՝ ասեմ, որ այս գրքում լուրջ տեղեկատվական բազա է գտնված, որը պարբերաբար օգտագործվում է մեր կողմից:

Ես նաև մեր պրակտիկաներին, ուսանողներին եմ խորհուրդ տալիս՝ ունենալ այս գրքերը եւ օգտվել դրանցից: Գիրքը շատ արժեքավոր է եւ դրա հետագա տպագրությունը նույնպես շատ կարեւոր է»,- նշեց գործադիր ներկայացուցիչը: Վերջինս հավելեց, որ հրա-

Գիրքը՝ ապրված գիտելիք ու կարողություններ

Արամ Գրիգորյան, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հաստատությունների օժանդակության բաժնի պետ

Այս անցումային շրջանում շատ կարեւոր աշխատանք է արվում. այն ցուցանիշները, թվերը, հետազոտության արդյունքները, որոնք ներկայացվում են եւ՝ փորձագիտական հանրությանը, եւ՝ շահագրգիռ պատկան մարմիններին, բավականին ինֆորմատիվ են, եւ մտածելու, վերլուծելու տեղիք են տալիս: Մարդկանց, որոնք սրա վրա աշխատում են, ճանաչում եմ վաղուց՝ դեռ ՀՖՄ-ն ձևավորված չէր: Դեռ 1995-96թթ. մեր առաջին հանդիպումներից իրենց մասին շատ բարձր կարծիքի եմ, ուղղակի հպարտության առիթ է, որ մենք նման փորձագիտական ներուժ ունենք: Իսկ հիմա նաև բավականաչափ երիտասարդություն կա, որ հաջողությամբ աշխատում է:

Արմենուհի Յովակիմյան, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի սոցիալական պաշտպանության բաժնի ղեկավար

Շանոթ եմ նաև գրքի նախորդ թողարկումներին: Շատ բովանդակային են, շատ հետաքրքիր, նաև երեխաներին առնչվող հարցեր կան, կրթությանը, հատկապես նախադպրոցական կրթությանը վերաբերող, քանի որ դա համայնքային գերակայության խնդիր է: Եվ միշտ այնտեղ հետաքրքիր տվյալներ են լինում, կարողանում ենք տեսնել, թե որ համայնքներում են ավելի խոցելի երեխաները՝ երեխաների պաշտպանության տեսանկյունից: Հետաքրքիր էր տեսնել նաև բյուջեների վերլուծությունը, քանի որ բոլոր ծառայությունները, այդ թվում՝ երեխաներին վերաբերող, պետք է ունենան բյուջետային հատկացումներ՝ նաև համայնքային բյուջեներից: Մենք աշխատում ենք թե ՀՖՄ-ի հետ, թե ուրիշ գործընկեր կազմակերպությունների հետ, որպեսզի այդ հատկացումներն ուղղորդվեն երեխաների համար ծառայությունների մատուցմանը: Այսինքն, հետաքրքիր վերլուծական նյութ է՝ հետագա ծրագրեր կազմելու:

Լևոն Բարխուդարյան, ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն, ՀՀ ֆինանսների նախկին նախարար

Գրքին չեմ հասցրել ծանոթանալ, բայց վստահ եմ, շատ բարձր որակի աշխատանք է, որովհետև գիտեմ նախորդ թողարկումները: ՀՖՄ-ն շատ մոտիկից գիտեմ, իրենց հետ համագործակցել եմ եւ կարող եմ ասել՝ հասարակական կազմակերպություններից եւ մյուս խորհրդատվական ընկերություններից շատ քչերը կարող են հպարտանալ, որ այսպես շատ արդյունքներ են արձանագրել: Վկան՝ բոլոր տարիների գրքերի շնորհանդեսները, շատ այլ աշխատանքներ, որոնք գրքերի տեսքով չեն ներկայանում, բայց շատ կարեւոր են:

Գայանե Մարտիրոսյան, World Vision կազմակերպության շահերի պաշտպանության ծրագրերի ղեկավար

Գրքին շատ հպանցիկ եմ ծանոթացել. դեռ չեմ հասցրել: Բայց ինչքան որ հասցրել եմ, տեսնում եմ, որ ինձ համար բավական լուրջ տեղեկատվություն կա, որը կկարողանանք օգտագործել ՏԻՄ-երի հետ աշխատելիս, հատկապես, օրինակ, կարողությունների զարգացման ոլորտում՝ նկատի ունենալով, որ մենք եւս անում ենք ՏԻՄ-երի կարողությունների զարգացումը սոցիալական աշխատողի հաստիքի ներդրման առումով: Նաև օգտակար կլինի հասկանալ, թե ծառայությունների վրա ուղղորդվող գումարները որքա՞ն են, եւ արդյո՞ք երեխաների պաշտպանության տեսանկյունից մենք կարող ենք այդտեղ ազդեցություն ունենալ:

Յեղիսե Մանասյան, ՀՈԱԿ-Հայաստան հիմնադրամի գործադիր տնօրեն

Առհասարակ, այս հրատարակությունը շատ կարեւոր է, իսկ ամեն տարի այս գիրքը բերում է նաև նախորդ տարիներին կուտակած տեղեկատվությունը, ինչը հնարավորություն է տալիս հետեւել տեղական ինքնակառավարման զարգացման միտումներին՝ ոչ միայն տվյալների, այլ նաև օրենսդրական դաշտի փոփոխությունների, ծրագրերի իրականացման առումով: Սա ունիվերսալ գիրք է՝ եւ՝ մասնագիտական, եւ՝ սիրողական լսարանին հասցեագրված: Նախ, իր տեսակի մեջ եզակի աշխատություն է՝ այսպիսի գրքեր շատ չեն հրատարակվում, եւ օրինակ, ԵՊՀ հանրային կառավարման մասնագիտությամբ սովորող ուսանողների համար, որոնք տեղական ինքնակառավարման մասնագիտացումն են ընտրել, սա Աստվածաշնչի նման մի բան է՝ վերցնում են, կարդում են, արտագրում են, դասերն են պատրաստում: Դրան գումարած՝ գիրքն օգտակար է նաև այն ծրագրերի համար, որոնք ուղղված են տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման համակարգերի զարգացմանը: Արժեքավոր նյութ կա Տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության, ՄԱԿ-ի, ԱՄՆ ՄՁԳ-ի, ԵՄ-ի, նման ծրագրերի, էլ չեմ ասում՝ տարբեր փորձագետների համար: Տարբերաբար գիրքը կատարելագործվում, հղվում է եւ հղվելու տեղ դեռ ունի: Քանի դեռ լիարժեք կայացած չէ մեր տարածքային կառավարման համակարգը, ՀՖՄ-ն շատ անելիք ունի՝ հրատարակելու, սեմինարներ անցկացնելու, դասընթացներ կազմակերպելու, ծրագրեր արմատավորելու առումով:

← էջ 3

տարակույթության հարցում մեծ դերակատարում ունի այն մասնագիտական թիմը, որի սրտացավությունն ու հետեւողական աշխատանքն է հանգեցնում նմանօրինակ լավ արդյունքների:

Տարիներ շարունակ գիրքը լույս է տեսել տարբեր միջազգային, դոկտոր կազմակերպությունների օժանդակությամբ, իսկ վերջին 4 տա-



րիներին այն հրատարակվում է ԱՄՆ ՄՉԳ դրամաշնորհային աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի շրջանակներում:

ԱՄՆ ՄՉԳ հայաստանյան առաքելության Կայուն զարգացման գրասենյակի գործող տնօրեն Լայլա Էնդրյուս Բաշանը, ողջունելով ներկաներին, անդրադարձ կատարեց հայ-ամերիկյան հարաբերություններին և նշեց, որ ԱՄՆ և ՀՀ կառավարությունները հաջողությամբ համագործակցում են արդեն 2 տասնամյակից ավել, և այդ տարիների ընթացքում ԱՄՆ-ը Հայաստանին տրամադրել է մոտավորապես 1 միլիարդ դոլարի աջակցություն՝ տնտեսական, հանրային կառավարման և մի քանի այլ ոլորտներում բարեփոխումների համար:

«Վերջին մի քանի տարիներին ԱՄՆ ՄՉԳ-ն աջակցում է ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների իրականացման գործընթացին՝ ակնկալելով, որ այն կնպաստի նաև բնակիչներին մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը: Մենք հավատում ենք, որ իշխանության ապակենտրոնացման արդյունքում տեղական ինքնակառավարման մարմինները կդառնան ավելի թափանցիկ, հաշվետու, և կմեծանա հանրային մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

ԱՄՆ կառավարության գործիքներից մեկն էլ ՀամաՏեղ ծրագիրն է, որի շնորհիվ մենք ունենք տեղական փորձագետների խումբ, որը հետևում է վարչատարածքային բարեփոխումների առաջընթացին, իսկ վերլուծությունն ու գնահատականը տրված է «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» շատ արժեքավոր հրատարակության մեջ: Մեծապես գնահատում են նաև այն հանգամանքը, որ զեկույցը լույս է տեսել 2 լեզուներով, ինչը թույլ կտա ոչ մի-

այն ԱՄՆ ՄՉԳ-ին, այլ նաև՝ միջազգային հանրությանը ծանոթանալ գրքին, ինչպես նաև պարբերաբար մշտադիտարկել ՀՀ ՏԻ համակարգը և հետեւել ոլորտում արձանագրվող առաջընթացին:

ԱՄՆ կառավարության, ինչպես նաև ԱՄՆ ՄՉԳ անունից ուզում են շնորհավորել և շնորհակալություն հայտնել ՀՀ ՄԻՆ և ՀամաՏեղ ծրագրի բոլոր կազմակերպություններին՝ զեկույցի

Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի վիճակի մշտադիտարկման 2017 թվականի տարեկան զեկույցի մասին առավել մանրամասնորեն խոսեց ՀՀ ՄԻՆ-ի ղեկավար, տեխնիկական գիտությունների թեկնածու, հրատարակության խմբագիր Վահրամ Շահբազյանը:

Վերջինս նախ ներկայացրեց փորձագիտական խմբի անդամներին, ապա նկատեց, որ ծավալուն այս աշխատանքը 30 րոպեում ներկայացնելն առնվազն դժվար է, եթե ոչ՝ անհնարին, և ինքը դա կանխ հատվածաբար: Վ. Շահբազյանը տեղեկացրեց, որ զեկույցի առաջին բաժինը Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական և ծրագրային գնահատումն է արտաքին պարտավորությունների կատարումը: Ըստ բանախոսի, նախորդ՝ 2016թ. զեկույցի համապատասխան բաժնում հիմնական ուշադրությունը դարձվել է նույն տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ընդունված նոր օրենքների վրա, մասնավորապես, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքն է նոր խմբագրությամբ ընդունվել, «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Ֆինանսական համահարթեցման մասին» և այլ օրենքներ են ընդունվել: 2017-ի տարեկան զեկույցում խնդիր է դրվել ստուգել ընդունված օրենսդրության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային: Եվ բաժնում վերլուծված են այն խնդիրները, որոնք առկա են հայաստանյան օրենսդրությունում՝ հենց այդ երկու փաստաթղթերին համապատասխանության առումով: Որպես օրինակ, Վահրամ Շահբազյանը բերեց 2015-ին փոփոխված Սահմանադրության մի քանի դրույթներ, որոնց հետ հակասություններ ունեն ոլորտը կարգավորող օրենքները, և հրավիրեց պատկան մարմինների ու շահագրգիռ բոլոր անձանց ուշադրությունը: «Առաջիկայի համար անելիքներ կան»: Անդրադարձ եղավ տեղական ինքնակառավարման ոլորտի պատասխանատու պետական մարմինների գործունեությանը: Արձանագրվեց, որ խորհրդարանի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը 2017թ. ընթացքում 12 նիստ է գումարել և Ազգային ժողովի օրակարգում ընդգրկելու համար ՏԻ ոլորտին առնչվող մի քանի օրինակների դրական եզրակացություն է տվել: Միաժամանակ, ՏԻ ոլորտը կարգավորող նախագծերը քննարկելու համար հիշյալ հանձնա-



յաստանում» գրքերի համար և նախատեսված է ոչ միայն ոլորտի փորձագետներին, այլ նաև ավելի լայն հանրության համար: Սա թույլ է տալիս գնահատել վարչատարածքային բարեփոխումները, ինչպես նաև ՀՀ ՏԻ ներկա իրավիճակը և համեմատություններ անել տարբեր տարիների հետ:

«ՀՀ տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքսի (ՏԻՏԻ) հաշվարկումը նպատակ ունի հնարավորինս համապարփակ գնահատել համակարգի տարեկան գործունեությունը՝ ՀՀ կենտրոնական կառավարությանը, ՏԻՄ-երին, քաղաքացիական հասարակությանը և այլ շահագրգիռ կողմերին տրամադրելով ՏԻ տարեկան գործունեության թվային գնահատական՝ ինդեքսի կամ համաթվի տեսքով:

Իսկ օրվա առանցքային թեմա հանդիսացող գրքի՝

Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի վիճակի մշտադիտարկման 2017 թվականի տարեկան զեկույցի մասին առավել մանրամասնորեն խոսեց ՀՀ ՄԻՆ-ի ղեկավար, տեխնիկական գիտությունների թեկնածու, հրատարակության խմբագիր Վահրամ Շահբազյանը:

Վերջինս նախ ներկայացրեց փորձագիտական խմբի անդամներին, ապա նկատեց, որ ծավալուն այս աշխատանքը 30 րոպեում ներկայացնելն առնվազն դժվար է, եթե ոչ՝ անհնարին, և ինքը դա կանխ հատվածաբար: Վ. Շահբազյանը տեղեկացրեց, որ զեկույցի առաջին բաժինը Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական և ծրագրային գնահատումն է արտաքին պարտավորությունների կատարումը: Ըստ բանախոսի, նախորդ՝ 2016թ. զեկույցի համապատասխան բաժնում հիմնական ուշադրությունը դարձվել է նույն տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ընդունված նոր օրենքների վրա, մասնավորապես, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքն է նոր խմբագրությամբ ընդունվել, «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Ֆինանսական համահարթեցման մասին» և այլ օրենքներ են ընդունվել: 2017-ի տարեկան զեկույցում խնդիր է դրվել ստուգել ընդունված օրենսդրության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային: Եվ բաժնում վերլուծված են այն խնդիրները, որոնք առկա են հայաստանյան օրենսդրությունում՝ հենց այդ երկու փաստաթղթերին համապատասխանության առումով: Որպես օրինակ, Վահրամ Շահբազյանը բերեց 2015-ին փոփոխված Սահմանադրության մի քանի դրույթներ, որոնց հետ հակասություններ ունեն ոլորտը կարգավորող օրենքները, և հրավիրեց պատկան մարմինների ու շահագրգիռ բոլոր անձանց ուշադրությունը: «Առաջիկայի համար անելիքներ կան»: Անդրադարձ եղավ տեղական ինքնակառավարման ոլորտի պատասխանատու պետական մարմինների գործունեությանը: Արձանագրվեց, որ խորհրդարանի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը 2017թ. ընթացքում 12 նիստ է գումարել և Ազգային ժողովի օրակարգում ընդգրկելու համար ՏԻ ոլորտին առնչվող մի քանի օրինակների դրական եզրակացություն է տվել: Միաժամանակ, ՏԻ ոլորտը կարգավորող նախագծերը քննարկելու համար հիշյալ հանձնա-

Հոփսիսի՛ն Մանուկյան, ՀՖՄ անդամ

Ինքս նաև ուսանողների հետ եմ աշխատում և հղումներով եմ որոշում այդ ազդեցությունը: Երբ ուսանողները տեղական ինքնակառավարմանը կամ ընդհանրապես հանրային կառավարմանը վերաբերող թեմա են ուսումնասիրում, հղումներն այս հրատարակություններին այնքան շատ են: Մենք ողողված ենք վերլուծություններով, հետազոտություններով, որոնց օգտագործման աստիճանը բարձր է, ինչը ես չեի ասի այս գրքերի մասին: Հեղինակները, վստահ եմ, եղել են գրեթե բոլոր համայնքներում, և ամենօրյա շփումների, աշխատանքի արդյունքում է ծնվել այս գիրքը. սա սենյակում, կաբինետում գրված գիրք է, սրանք բոլորը ապրված գիտելիք ու կարողություններ են:

Նահրա Առաքելյան, Արմավիրի գարգացման կենտրոնի ՀԿ գործադիր տնօրեն

Ուզում եմ շեշտը դնել համայնքային ծառայությունների մատուցման կետի վրա: Նմանատիպ վերլուծությունները համայնքներին հնարավորություն են տալիս առավել իրատեսական պատկեր ունենալ: Օրինակ, աղբահանությունը, համայնքների ամենամեծ խնդիրն է: Եվ այս թվային տվյալներով, այս փորձի նկարագրությամբ գուցե համայնքները կարողանան հետագայում բարելավել իրենց ծառայությունների որակը:

Նորա Ղուկասյան, ՀՖՄ վարչության անդամ

Ես ֆինանսիստ եմ և աշխատում եմ Երեւանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում: Այս գիրքը մեզ համար մեթոդական ուղեցույց է: Բազմաթիվ տարիներ օգտվում եմ ՀՖՄ-ի կողմից հրատարակված գրքերից: Օրենքները կան, գործում են, բայց երբեմն դրանք կիրարկելու ժամանակ անհրաժեշտություն է լինում որեւէ հարցի շուրջ քննարկում ծավալելու, տեսակետ որոշակիացնելու, ու այդ դեպքում այս գրքերը մեզ շատ են օգնում: Օրինակ, իմ նախորդ ՀՖՄ վարչության անդամի փորձը ցույց է տալիս, որ այս հրատարակությանն սպասում են նաև համայնքներում:

Վարուժան Բարսեղյան, Վեդու քաղաքապետ

Գիրքն ավելի շատ ֆինանսական բլոկի մասնագետներին է ուղղված, շատ հարցերով տեսական վերլուծություններ են արվում: Շատ է պատահել, որ գրավոր, բանավոր դիմել ենք ու շատ հարցերի պատասխաններ ենք ստացել: Այս տարեկան հաշվետվություններում արվող վերլուծություններում ընդգրկված թեմաներ, խնդիրներ կան, որոնք հանդիպում են համայնքային պրակտիկայում և գործնական կիրարկումներ են ունենում:

Խաչատուր Բեգիրջյան, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Լրացուցիչ և շարունակական կրթության գծով պրոռեկտոր

Շատ բազմակողմանի ուսումնասիրություն է՝ իր նախորդ թողարկումների նման: Ինձ հատկապես առաջարկություններն են հետաքրքրում՝ ցանկացած աշխատության, գիտական հետազոտության ամենահետաքրքիր ու ամենակարեւոր մասը: Այսինքն, վերջում ինչի՞ են հանգել: Եթե առաջարկություններ չկան, ուրեմն հետազոտությունն ինքնակառավարման է: Նայե՛ք՝ ինչքան թվային տեղեկատվություն կա: Ուսանողին, որը գրում է տեղական ինքնակառավարման մասին, արդեն պետք է ինչ-որ այլ տեղում փնտրել. պատրաստի, կոմպակտ, թարմ՝ 2017-ի տվյալներ են, որոնք կարելի է օգտագործել: Շատ լավ կարող են օգտագործել այս գրքերը համայնքների ղեկավարները, եթե գրագետ են, ազնիվ ու կառավարելու ձիրք ունեն: Այս գրքերում եղած ինֆորմացիան կարող է օգտակար լինել նաև համայնքների հետ ամփոփակաբար համագործակցող, այնտեղ ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների համար:

Դավիթ Ամիրջյան, «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» գրասենյակի ծրագրերի գծով փոխտնօրեն

ՀՖՄ-ի և «ԲՀՀ-Հայաստան»-ի համագործակցությունը մոտավորապես 18 տարվա պատմություն ունի: Այս տարիների ընթացքում իրականացրել ենք մի շարք ծրագրեր և, սկզբնական շրջանում մենք աջակցում էինք նաև «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» գրքի երկու տարվա տպագրությանը:

Այս աշխատությամբ տարին մեկ անգամ ամբողջական ամփոփվում ու գնահատվում է ՀՀ ՏԻ իրավիճակը: Սա շատ կարեւոր է, որովհետեւ Հայաստանն այն երկրներից է, որտեղ ՏԻ կայացումը ժողովրդավարության կայացման կարեւոր բաղադրիչներից է: Այս գիրքն ըստ էության միակ փաստաթուղթն է, որը հետո կարող է դառնալ օբյեկտիվ՝ ռեֆլեքսիա անելու անցածին ու հասկանալու, թե հաջորդ քայլերը որոնք պետք է լինեն: Սա մի համապարփակ աշխատություն է, որը ցույց է տալիս ոլորտի բոլոր հաջողությունները, ձեռքբերումները, թերացումները:

Գիրքը ՀՀ ՏԻ ոլորտի վերաբերյալ ամենակարեւոր ու միակ փաստաթուղթն է մեր երկրում, և լավ կլինի, որ այն օրինակ դառնար, և այլ ոլորտներում մասնագիտացած կառույցները նույնպես նման մշտադիտարկում իրականացնեն և ստեղծեն այսպիսի արժեքներ:

Շատ կարեւոր է, որ գիրքը երկրագնդում է: Մեզ համար շատ մեծ հպարտություն էր, երբ այս հրատարակությունը ներկայացվում էր նաև եվրոպական երկրներում՝ որպես ՀՀ ՏԻ մասին տեղեկատվություն հայթայթելու միակ աղբյուր:

Որպես ռեսուրս՝ գիրքը յուրահատուկ է, քանի որ հիմքում ունի մշակված մեթոդաբանություն, հստակ կառուցվածք ու ձևաչափ, գիտական աշխատություն լինելով՝ միաժամանակ գրված է հանրամատչելի լեզվով: Այս գրքից օգտվում են եւ՝ պաշտոնյաներն ու մասնագետները, եւ՝ դասախոսներն ու ուսանողները, եւ՝ հանրության լայն շրջանակները:

← Էջ 4

Լեւոն Թումանյան, ՀՀ Մ վարչության անդամ

Այս վերլուծությունները շատ կարեւոր են, բայց իշխանությունները պետք է իրատեսորեն նայեն այդ փորձագիտական վերլուծություններին, առաջնորդվեն նաեւ դրանցով: Սա արդեն 10-րդ գիրքն է, եւ այս տարիների ընթացքում այս վերլուծությունները, գնահատականները, առաջարկություններն իրենց որոշակի դերը կատարել են: Ուրիշ բան, որ մեր իշխանությունները հաճախ այնքան էլ ականջալուր չեն լինում այն առաջարկություններին, որոնք անում են մասնագետները: Խոսքը համայնքների այս վերջին՝ մեխանիկական խոշորացման, նաեւ հանրապետության նոր, ավելի արդյունավետ վարչատարածքային բաժանման անհրաժեշտության մասին է:

Գրիգոր Դաշտոյան, «Գեղարեզ» կրթամշակութային երիտասարդական ՀԿ նախագահ, Գավառ համայնքի ավագանու անդամ

ՀՀ Մ-ի կողմից հրատարակված այս գիրքը շատ մեծ տեղ ու դեր ունի ՀՀ ՏԻ կայացման ու զարգացման գործում: Այն պարունակում է ուղրոտի վերաբերյալ բազմաբովանդակ ու խորքային վերլուծություններ, որոնք շատ անհրաժեշտ են ՏԻ համակարգի մասնագետների համար: Ուղրոտով հետաքրքրվող անձանց համար այն սեղանի լավագույն գրքերից է:

Շնորհավորում եմ հերթական գրքի լույս ընծայման առթիվ ու վստահեցնում եմ, որ Գավառի համայնքապետարանում այս հատորը եւս կարժանանա իր նախորդների բախտին՝ դառնալով պահանջված ու գործածվող, եւ ունենալով ուղեցույցային նշանակություն:

Արսեն Լոջյան, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Բոլոր նրանք, ովքեր առնչվում են այս կազմակերպության հետ, գիտեն, թե նրանք ինչպիսի դժվար ճանապարհ են անցել, ինչ արգելքներ են հաղթահարել եւ ինչ արդյունքների են հասել: Մենք ականատես եղանք նաեւ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» գրքերի էվոլյուցիային: Հաճախ է ասվում, որ այս գրքի շահառուները ՏԿԶ-ն աշխատակիցներն են, ուղրոտի մասնագետները: Իմ համոզմամբ, այս հրատարակության շահառուները ՀՀ բոլոր քաղաքացիներն են, որովհետեւ այս աշխատանքը նպաստել է ՀՀ համայնքային ծառայության եւ տեղական ինքնակառավարման կայացմանը, ինչը կարեւոր է բոլորիս համար:

Վաչե Տերտերյան, Տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի առաջին տեղակալ

Վստահեցնում եմ, որ բացի գիտական, ուսանողական, ակադեմիական շրջանակներից, այս վերլուծություն-ուսումնասիրությունից օգտվում ենք բոլորս, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման եւ պետական կառավարման մարմիններում: Այս գիրքը մեծ նշանակություն ունի նաեւ միջազգային գործընկերային հարաբերություններում. Եւ, եվրոպական շատ պետությունների գեկույցներ հիմնվում են ՀՀ Մ-ի կողմից հրատարակված այս պարբերականի նյութերի վրա, եւ այն դիտարկելի շարքերը, վերլուծությունները, որոնք տարեցտարի տեղ են գտնում այս աշխատության մեջ, հիմք են դառնում որոշակի գնահատականներ եւ պատկերացումներ կազմելու ոչ միայն ՀՀ ՏԻ համակարգի կամ տեղական ժողովրդավարության դիտարկման, այլ նաեւ մեր երկրի զարգացման մասին ընդհանրապես: Սա շատ օգտակար է ինչպես իր հասարակական, հանրային նշանակությամբ, այնպես էլ ուսումնական, մասնագիտական խորքային գիտելիքների առումով:

Արթուր Դրամիյան, ԱՄՆ ԱԶԳ ծրագրերի համակարգող

Տարիների ընթացքում դրականորեն փոխվել է գրքի որակը, ավելացել է անալիտիկ խորությունը: Բայց շատ կարեւոր է, որ պահպանվել է որոշակի հետետեղական կառուցվածք, որին փորձագետների թիմը շարունակում է հետեւել եւ ըստ էության այդ հստակ կառուցվածքը թույլ է տալիս կատարել համեմատական վերլուծություն՝ հասկանալու համար, թե տարիների ընթացքում ինչն է փոխվել, ինչն է մնացել նույնը, որտեղ կան հաջողություններ, իսկ որտեղ միգուցե դանդաղում ենք...

Ես այս գիրքը կոչում եմ «Տեղական ինքնակառավարման վիճակը Հայաստանում», որովհետեւ տարեցտարի փորձագիտական թիմը ներկայացնում է Հայաստանում տեղական ինքնակառավարման վիճակը, ներկայացնում ՏԻ առանձին ուղրոտներում կատարված փոփոխությունները, առաջընթացը, զարգացման խոչընդոտները եւ այլն:

Գիրքն ինձ հարգատ է նաեւ այն պատճառով, որ անձամբ մի փոքր մասնակցություն եմ ունեցել. 2004-2006 թվականների վերաբերյալ հրատարակված աշխատության հեղինակներից մեկն եմ եղել եւ կարող եմ վկայել, թե ինչքան դժվար, մանրակրկիտ աշխատանք է դա, եւ ինչքան ջանք էր դնում դրա վրա այն ժամանակ Դավիթ Թումանյանը, այժմ էլ՝ Վահրամ Շահբազյանը: Դա տաժանակիր աշխատանք է, որովհետեւ պետք է անցնել փորձագետների մշակած բոլոր նյութերի վրայով, խմբագրել բոլոր տեքստերը, բերել մեկ հայտարարի, միեւնույն ձեւաչափի:

Շատ բարձր եմ գնահատում կատարված աշխատանքը: Իր տեսակի մեջ եզակի հրատարակություն է, որովհետեւ կան այլ երկրների նմանատիպ գեկույցներ, բայց չկա որեւէ երկիր, որը հաջորդաբար, տարեցտարի իրար հետեւից նման գեկույց է պատրաստել: Այս գիրքն ունիկալ է նաեւ այն իմաստով, որ այն երկրներն է՝ հայերեն եւ անգլերեն, եւ ըստ էության Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների շատ փորձագետներ օգտվում են այս գեկույցից, կարողանում են տեղեկանալ ՀՀ ՏԻ վիճակի մասին, ծանոթանալ արված եզրակացություններին, առաջարկություններին եւ կանխատեսումներին:

Շնորհավորում եմ մեզ բոլորիս՝ ՀամաՏեղ ծրագրին, որի շրջանակներում տպագրվում է այս գիրքը, ՀՀ Մ-ին, գրքի փորձագիտական խմբին, ցանկանում եմ բեղմնավոր ու երկար տարիների աշխատանք, հաջողություններ, բազմաթիվ հրատարակումներ:

ժողովը որեւէ հանրային քննարկում չի կազմակերպել, այսինքն, չի իրականացրել խորհրդարանական լսումներ կազմակերպելու իր լիազորությունը: Հանրային քննարկումներ՝ իր մշակած օրինագծերի վերաբերյալ չի կազմակերպել նաեւ գործադիր մարմինը՝ Տարածքային



կառավարման եւ զարգացման նախարարությունը: Ի տարբերություն, սակայն, խորհրդարանական հանձնաժողովի, ՏԿԶ-ն նախագծերն ուղարկել է շահագրգիռ բոլոր կողմերին, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման բնագավառի համապատասխան կազմակերպություններ, այդ թվում՝ Համայնքների ֆինանսիստների միավորում: Բանախոսը գոհունակությամբ արձանագրեց, որ իրենք կարողացել են իրենց տեսակետները ներկայացնել՝ դիտողություն-առաջարկություններ անել:

Ներկայացվեցին հանրապետությունում վերջին վարչատարածքային բարեփոխումները՝ վերջին երեք տարիների կտրվածքով, թվային տվյալներ՝ ստեղծված բազմաբնակավայր համայնքների, մնացած համայնքների մասին: Ըստ այդմ, Հայաստանի Հանրապետությունում այսօր ունենք 502 համայնք՝ ներառյալ մայրաքաղաք Երեւանը: 68 համայնք բազմաբնակավայր է, նրանցից 54-ը երեք եւ ավելի բնակավայր է ներառում: Խոշորացման գործընթացի մեջ ներառված չէ 450 համայնք: Չեկուցողն արձանագրեց, որ Հայաստանում վարչատարածքային բարեփոխումները կիսով չափ են իրականացվել, այսինքն, սպասվում է համայնքների մյուս կեսի խոշորացումը: Պարոն Շահբազյանը ներկայացրեց մեկ համայնքին բաժին ընկնող վարչական տարածքի, նաեւ՝ բնակչության միջին թվի փոփոխության տեղաշարժը՝ պայմանավորված 2017-ի վարչատարածքային բարեփոխումներով, գուցեհեռներ անցկացրեց Արեւմտյան եվրոպական երկրների համանման վիճակագրության հետ, խոսեց երկրում ուրբանիզացիայի մակարդակի եւ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի չափի մասին՝ համադրելով այն այս անգամ էլ Արեւելյան Եվրոպայի երկրների հետ: Անդրադարձ եղավ ՏԻ-երի ձեւավորմանը, լիազորություններին, գործունեությանը, տեղական ինքնակառավարմանը քաղաքացիական հասարա-

կության մասնակցությանը, 2017-ին ընտրված համայնքների ղեկավարների կուսակցական պատկանելությանը, համայնքների սեփականությանը, զարգացման ծրագրերին եւ ֆինանսական անկախությանը: Խոսելով ՏԻ-երի եւ աշխատակազմերի գեկույցային բաժանման մասին, կարեւոր է նշել, որ միջազգային գործընկերները կարեւորում են հայաստանյան վարչատարածքային բարեփոխումները, ապակենտրոնացումը, տեղական ժողովրդավարության ամրապնդումը, համայնքների ֆինանսական կառավարման կատարելագործումը, էլեկտրոնային կառավարման զարգացումը: Հաշվետու տարում՝ 2017 թվականին շարունակվել են միջազգային կազմակերպությունների աջակցությամբ ծրագրերը մեր երկրի ՏԻ համակարգում:

Բանախոսը ներկայացրեց նաեւ տեղեկատվություն ՏԻ-երի լիազորությունների եւ ֆինանսական միջոցների համապատասխանության վերաբերյալ, դրանց համեմատականը Եվրամիության անդամ երկրների նույն ցուցանիշների հետ, տվյալներ 2017թ. ընթացքում ՏԻ-երի կողմից մատուցված ծառայությունների եւ համայնքային կառավարման վերաբերյալ, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման 2015-2017թթ. տարեկան ինդեքսերի հաշվարկման ամփոփ արդյունքները եւ այդ տարիների դիտարկման՝ ըստ տե-



պահում: Համայնքապետարանների աշխատակիցների կեսից ավելին՝ 50,3%-ն է կին, եւ այս առումով էլ շարունակում են պահպանվել նախորդ տարիների միտումներ:

ղական ինքնակառավարման առանձին ուղրոտությունների: Այդպիսով, 2015թ. ՏԻՏԻ-ն կազմել է 4.4 բալ, 2016 թվականին՝ 4.24 բալ եւ 2017-ին՝ 4.38 բալ, 0-10 բալ գնահատ-



րո: Անդրադարձ եղավ համայնքային ծառայությանը, դրա օրենսդրական հիմքերին, պաշտոնների թվին՝ ըստ մարզերի, ատեստավորմանն ու թափուր տեղերին, վերապատրաստմանը, այնուհետեւ՝ մեր երկրում տարբեր առաքելություն իրականացնող միջազգային կազմակերպությունների ու

ման սանդղակի սահմաններում: Շնորհանդեսի ավարտին ինչեցին գրքին վերաբերող բազմաթիվ հարցեր, որոնք բանախոսն ու փորձագիտական խումբը տվեցին մանրամասն ու սպառնիչ պատասխաններ:

**ՀԱՍՄԻԿ ԶԵՐՈՒՅԱՆ
ԽԱՉԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՏԻՄ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի շրջանակներում Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը (ԺԱԱ) 2016 թվականից սկսած իրականացնում է ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կողմից օրենսդրությամբ սահմանված թափանցիկության, հանրային հաշվետվողականության և մասնակցության ապահովման պարտավորությունների կատարման մշտադիտարկում: Արդյունքների մասին ԺԱԱ-ն պարբերաբար իրազեկում է հանրությանը և համայնքներին՝ մարզային համաժողովների ձեռնարկով և անվանական նամակագրությամբ:

Մոնիտորինգի նպատակն է ՏԻՄ-երի թափանցիկության, հաշվետվողականության և տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության մակարդակի և որակի բարձրացումը, ինչը սահմանված է ՀՀ օրենսդրությամբ:

Հոկտեմբերի 4-ին կազմակերպությունը հանրությանը ներկայացրեց հերթական մոնիտորինգի տարեկան զեկույցը:

Ողջունելով ներկաներին՝ ԱՄՆ ՄԶԳ ծրագրերի համակարգող Արթուր Դրամփյանը նշեց. «ԺԱԱ-ն նման մշտադիտարկում անցկացրել է երկար տարիներ, բայց վերջին 3 տարիներին դա հանդիսանում է ՀամաՏեղ ծրագրի բաղադրիչ, և այս հետազոտությունը կարող ենք համարել ծրագրի նվաճումներից և լավագույն արդյունքներից մեկը:

Այս մշտադիտարկման արդյունքում մենք ոչ միայն արձանագրում ենք որոշակի փաստեր, թե ինչքանով թափանցիկ է հաշվետվողական են ՀՀ առանձին համայնքները, այլ նաև աշխատանք է տարվում համայնքների հետ, քաղաքացիական հասարակության միջոցով փորձ է արվում բարձրացնել ՏԻՄ-երի գիտակցության մակարդակն առ այն, որ կան նորմեր և պահանջներ, որոնք պետք է խստիվ կատարվեն, որովհետև դրանք օրենքի ուժ ունեն, հետևաբար՝ տեղեկատվության տրամադրումը չի կարող լինել ինչ-որ մեկի քմահաճույքը, դա օրենքի պահանջ է»:

Ա. Դրամփյանը կարեորեց նաև այն հանգամանքը, որ զեկույցի նախնական տարբերակը քննարկվել է մարզ առ մարզ, և որ այսօր արդեն իսկ կա հնարավորություն՝ համեմատություն անցկացնել ներկա և նախորդ տարիների արդյունքների միջև:

Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) փոխնախագահ Աբրահամ Արտաշեսյանն էլ նկատեց. «Նման զեկույցն արժեքավոր է այնքանով, որ ավելացնում է մասնակցային գործիքակազմը, որի միջոցով փորձում ենք տեղական ինքնակառավարման ոլորտում հասնել պատշաճ կառավարման՝ հետևելով Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված և Եվրոպայի խորհրդում ամրագրված «Նորարարության և պատշաճ կառավարման 12 սկզբունքներին»: Դրանցում ամրագրվում է տեղական իշխանությունների պարտավորությունը թափանցիկություն և բաց կառավարում ապահովելու, հասանելի և մատչելի տեղեկատվություն տրամադրելու առումով: Նման գործիքով մենք փորձում ենք ոչ թե պատժիչ, այլ խրախուսող քայլեր կատարել, որպեսզի տեղական իշխանություններին ցույց տանք, թե ինչպիսին պետք է լինի տեղեկատվությունը, ինչպես կարելի է դա հասցնել բնակչությանը»:

Կատարված լայնածավալ ու բովանդակալից վերլուծական աշխատանքը մակրամասնորեն ներկայացրեց ԺԱԱ խորհրդի նախագահ Լեոն Բարսեղյանը: Վերջինս նախ շնորհակալություն հայտնեց գործընկեր կազմակերպություններին, հատկապես՝ ՀՖՄ-ին, զեկույցի նկատմամբ ցուցաբերած ուշադ-



րության, հետևողականության և արված առաջարկների համար:

Բանախոսը տեղեկացրեց, որ որպես մոնիտորինգային ուսումնասիրման թի-

րության ընտրվել են Հայաստանի բոլոր 502 համայնքները և դրանց ՏԻՄ-երը: Մշտադիտարկման մեթոդաբանությունը նույնն է թողնվել, և 2018թ. մշտադի-



տարկման մեկնարկին տեղեկությունների հարցումներ են ուղարկվել ՀՀ բոլոր համայնքապետներին: Հաշվի առնելով երկրում տեղի ունեցող զարգացումները, որոնք կարող էին պատճառ հանդիսանալ հարցումներին չարձագանքելու և պատասխաններն ուշացնելու համար՝ մոնիտորինգային թիվը 349 համայնքի կրկնակի հարցում է ուղարկել:

Լ. Բարսեղյանը նշեց, որ ինչպես նախորդ տարիներին, այս տարի նույնպես ստացվել են մի շարք հետաքրքիր պատասխաններ: Մի քանի համայնքապետեր, տեսնելով իրենց հասցեագրված ծանուցագրով նամակը, հրաժարվել են այն ստանալ: Տավուշի մարզի Գետահովիտ համայնքին ուղարկված ծրագրի վրա փոստատարը գրել է՝ «անհայտ բաժանորդ», իսկ Արարատի մարզի Ավշար համայնքից հետ վերադարձված ծրագրի վրա գրված է եղել՝ «չպահանջված»...

Անդրադառնալով ստացված պատասխանների հիման վրա արված վերլուծության ընդհանուր պատկերին՝ ԺԱԱ խորհրդի նախագահը տեղեկացրեց, որ ըստ որակական և քանակական ցուցանիշների՝ արձանագրվել է հետևյալ պատկերը. 502 համայնքներից, ներառյալ Երեւանը, հարցումներին պատասխանել է 232-ը (46,22%): 2017թ. մոնիտորինգի ընթացքում այդ ցուցանիշը 27,1% էր, իսկ 2016 թվականին՝ 36,5%:

Համայնքապետերին ուղղված հարցերից մեկն էլ վերաբերում է ՏԻՄ-երի կողմից հանրային քննարկումների կամ լսումների կազմակերպմանը և անցկացմանը: Եթե մշտադիտարկման շրջանակներում Հայաստանի բոլոր 502 համայնքների ղեկավարներից հղված հարցումներին պատասխանել է 232-ը, ապա դրանցից միայն 173-ն է պատասխանել հանրային քննարկումների կամ լսումների մասին հարցին:

Ի դեպ, ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում ՀՀ-ն 2015թ. մշակել է «Համայնքի տարածքում հանրային քննարկումների, լսումների կազմակերպման և անցկացման կարգը», որը Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից տրամադրվել է ՀՀ բոլոր համայնքների ղեկավարներին, որպեսզի վերջիններս ներկայացնեն ավագանիների քննարկմանը և հաստատմանը: ՀՀ համայնքների մեծ մասը հաստատել է այդ կարգը:

Վերոնշյալ հարցի առնչությամբ Լ. Բարսեղյանը նկատեց. «Ենթադրվում է, որ հարցումներին պատասխանած և այլ տեղեկություններ հաղորդած մյուս 97 համայնքապետերն իրենց համայնքներում կամ հանրային լսումներ չեն


էջ 7 →

Մարզեր և մայրաքաղաք	Համայնքների թիվը	Ընդամենը ստացված պատասխանները		Գրավոր և էլեկտրոնային պատասխանների թիվը և որակը 29.09.2018թ. դրությամբ				Անպատասխան հարցումների թիվը	
		հատ	%%	լիարժեք	%%	թերի	%%	հատ	%%
1 Լոռի	56	51	91.1%	37	66.1%	14	25.0%	5	8.9%
2 Վայոց Ձոր	8	7	87.5%	6	75.0%	1	12.5%	1	12.5%
3 Սյունիք	8	6	75.0%	5	62.5%	1	12.5%	2	25.0%
4 Կոտայք	42	29	69.0%	23	54.8%	6	14.3%	13	31.0%
5 Շիրակ	42	24	57.1%	14	33.3%	10	23.8%	18	42.9%
6 Տավուշ	24	12	50.0%	5	20.8%	7	29.2%	12	50.0%
7 Արարատ	95	43	45.3%	27	28.4%	16	16.8%	52	54.7%
8 Գեղարքունիք	57	20	35.1%	17	29.8%	3	5.3%	37	64.9%
9 Արմավիր	97	28	28.9%	19	19.6%	9	9.3%	69	71.1%
10 Արագածոտն	72	11	15.3%	4	5.6%	7	9.7%	61	84.7%
11 Երեւան	1	1	100.0%	1	100.0%	0	0.0%	0	0.0%
Ընդամենը	502	232	46.2%	158	31.5%	74	14.7%	270	53.8%

ՅԵՐԹԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՉԵԿՈՒՅՑԸ

← էջ 6

Աղյուսակ 2



անցկացրել, կամ դրանք անցկացրել են առանց արձանագրային տեղեկատվության: Այս պատկերը վկայում է համայնքների ղեկավարների ճշող մեծամասնության անուշադրությունը սեփական պարտականություններից այս մեկի կատարման նկատմամբ:

Մշտադիտարկման թիրախ է հանդիսացել նաև ՏԻՄ-երի կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի երրորդ մասով նախատեսված տեղեկությունների պաշարի պրոակտիվ տրամադրումը հանրությանը: Ինչպես՞, ի՞նչ ծավալով է դա արվում:

Ըստ մշտադիտարկման արդյունքների, հարցումներին պատասխանած 232 համայնքների ղեկավարներից միայն 142-ն է նշել, որ իրենց համայնքում կա ավագանու նստավայր, իսկ ավագանու նիստերի կամ հանրային քննարկումների անցկացման սրահի կամ դահլիճի առկայության մասին նշել է 98 համայնքապետ:

Հետաքրքիր պատասխաններ են տրվել ավագանու նիստերի սրահում քաղաքացիների նստելատեղերի քանակին վերաբերող հարցին: համայնքապետերից մի քանիսը պատասխանել են՝ «ըստ ներկաների թվի», «ինչքան որ տեղ կա համայնքապետի աշխատասենյակում», «ըստ ցանկացողների թվի», «բավարար»...

Ամփոփելով դիտարկման արդյունքները՝ Լ. Բարսեղյանը նշեց մի

քանի խնդիրներ, որոնք բացահայտվել են մոնիտորինգի արդյունքում և ներկայացրեց առաջարկություններ դրանց կարգավորման համար:

Չեկույցի ավարտին հնչեցին մի շարք տեսակետներ, ի թիվս որոնց առաջարկվեց առանձին մասով ներկայացնել բազմաբնակավայր համայնքներից ստացված արդյունքները, հատուկ ուշադրություն դարձնել ավագանու նիստերի առցանց հեռարձակմանը:

Մի շարք նկատառումներ ներկայացրեց նաև ՀՖՄ փորձագիտական խմբի ղեկավար Վահրամ Շահբազյանը և կարեւորեց նմանօրինակ մոնիտորինգի իրականացումը: Նմանատիպ ծրագրերը խթանում են, օգնում են տեղական իշխանություններին, որպեսզի նրանք պատրաստակամ լինեն, հասկանան իրենց պարտականությունները և պատասխանատվությունը օրենքի պահանջների կատարման նկատմամբ, և 3 տարվա ընթացքում արդեն բավականին դրական փոփոխություն կա, ինչպես նկատեց բանախոսը:

ԺԱԱ խորհրդի նախագահը տեղեկացրեց, որ գալիք տարվա ընթացքում նախատեսվում է ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում մարզերում ներկայացնել զեկույցի նաև վերջնական տարբերակը, ինչպես նաև հրապարակել 4 տարիների մոնիտորինգի ամփոփ պատկերը:

ՀԱՄԱԿ ԲԵՐՈՒՅԱԼ



ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ԽԱԽՏՈՒՄ Է «ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՊԱՅՄԱՆՁՆԵՐԸ

Հայտարարություն

Իջեւանի համայնքապետի կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման մասին

10 հոկտեմբերի, 2018թ.

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանը 2018թ. սեպտեմբերի 10-ին տեղեկության գրավոր հարցմամբ դիմել էր Իջեւանի համայնքապետ Վարդան Ղալումյանին, խնդրելով իրեն տրամադրել 2013թ. հունվարի 1-ից մինչև օրս Իջեւան համայնքի բյուջեի միջոցներից ֆինանսական օժանդակության/օգնության հատկացման մասին հետեւյալ տեղեկությունները.

- Բանի՞ հոգու է հատկացվել ֆինանսական օժանդակություն, ըստ այդ տարիների ամիսների, ամիս առ ամիս:
- Որքա՞ն են եղել տրամադրված ֆինանսական օժանդակության չափերը, խնդրում եմ նշել յուրաքանչյուր դեպքը, տրամադրման ամսաթիվը, ամիսը, տարին, ֆինանսական օժանդակության չափը և շահառու իրավաբանական կամ ֆիզիկական անձի կարիքը, որի համար հատկացվել է օժանդակությունը:
- Ֆինանսական օժանդակության յուրաքանչյուր դեպքի իրավական հիմքերի պատճենները:

Իջեւանի քաղաքապետ Վարդան Ղալումյանը 2018թ. սեպտեմբերի 25-ին N611 գրությամբ պատասխանել է տեղեկության հարցմանը: Պատասխանում նշվում է. «... Համայնքի բյուջեի միջոցներից սոցիալական օգնության տրա-

մադրման հիմք են հանդիսանում համայնքի ավագանու որոշումները: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված է տեղեկություն տնօրինողի կողմից հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ կետով՝ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը: Վկայակոչված հոդվածներին համապատասխան հրապարակման ենթակա տեղեկությունը գետնից է համայնքի պաշտոնական ijevan.am կայքում, որից կարող եք ստանալ Ձեզ անհրաժեշտ տեղեկատվությունը: Ինչ վերաբերվում է Ձեր հարցման 1.2 և 1.3 կետերին, ապա համայնքը, ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումներով, նպատակահարմար չի գտնում նման տեղեկատվության տրամադրումը Ձեզ»:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը, ուսումնասիրելով այս պատասխանը և պատասխանում նշված կայքը, նկատում է.

1. Մի քանի անգամ փորձելով մատնանշված կայքում ծանոթանալ հարցված տեղեկություններին, արձանագրեցինք, որ Իջեւանի քաղաքապետի մատնանշած www.ijevancity.am կայքը կենդանության նշաններ ցույց չէր տալիս, ինչը հնարավորություն չտվեց հարցված տեղեկությունները որոնել և գտնել այդ կայքում: Լուսապատկերը կարող եք տեսնել այս հայտարարությանը կից:

2. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, որով սահմանվում են այն դեպքերը, երբ հարցված տեղեկությունների տրամադրումը պիտի մերժվի օրենքով սահմանված գաղտնիք հանդիսանալու բերումով, որեւէ կերպ չի առնչվում 1.2 կետով հարցված հետեւյալ տեղեկություններին. «...որքա՞ն են եղել տրամադրված ֆինանսական օժանդակության չափերը, խնդրում եմ նշել յուրաքանչյուր դեպքը, տրամադրման ամսաթիվը, ամիսը, տարին, ֆինանսական օժանդակության չափը և շահառու իրավաբանական կամ ֆիզիկական անձի կարիքը, որի համար հատկացվել է օժանդակությունը» տեղեկությունների մեջ չկա որեւէ բան, որ հանդիսանա պետական կամ ծառայողական գաղտնիք, անձնական գաղտնիք, առևտրային գաղտնիք, հեղինակային իրավունքը խախտող, բժշկական, փաստաբանական, նախաքննության կամ օրենքով սահմանված այլ գաղտնիք:

3. Քաղաքացիներին համայնքային բյուջեի միջոցներից ֆինանսական օժանդակություն տրամադրելու իրավական հիմքերը Իջեւանի քաղաքապետը նույնպես չի տրամադրում՝ դրանց օրենքով սահմանված գաղտնիքի որակ վերագրելով: Միաժամանակ, գարմա-նալիորեն, պատասխանի սկզբում քաղաքապետը նշում է, թե այդ օգնությունները տրամադրվել են Ավագանու որոշումների հիման վրա: Փաստորեն քաղաքապետը հանրությանից, անհասկանալի պատճառով և անհիմն կերպով, գաղտնի է պահում համայնքի ավագանու ընդունած իրավական ակտերը, այնինչ դրանք պետք է հրապար-

րակվեին և տրամադրվեին դրանց ծանոթանալ կամեցող մարդկանց:

Հաշվի առնելով վերը բերվածը, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը հայտարարում է, որ Իջեւանի քաղաքապետ Վարդան Ղալումյանը խախտել է քաղաքացու տեղեկատվության ազատության սահմանադրական իրավունքը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որի դրույթներով հստակ սահմանված է, որ անձանց տեղեկության հարցումներին հարկավոր է պատասխանել օրենքով սահմանված կարգով և տրամադրել բոլոր այն տեղեկությունները, որոնք օրենքով սահմանված գաղտնիք չեն, իսկ գաղտնիք պարունակելու դեպքում պիտի տրամադրվի այն մասը, որը գաղտնիք չի պարունակում: Այսպիսով, Վարդան Ղալումյանի պատասխանը ձեւական է, թերի է: Դրանով քաղաքապետը փաստացի ապօրինաբար մերժում է հանրային նշանակության տեղեկությունների տրամադրումը և/կամ հրապարակումը:

Անհասկանալի համարելով այս դիտավորությունը՝ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը կոչ է անում Իջեւանի քաղաքապետին վերանայել գաղտնի աշխատելու իր դիրքորոշումը, հրապարակել ավագանու ընդունած իրավական ակտերը, գործարկել կամ վերագործարկել քաղաքապետարանի պաշտոնական կայքը և բարեխղճության բարձր մակարդակով պատասխանել քաղաքացիների հարցումներին:

**Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը
Լուսանկարը՝ slaq.am-ի**

